ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԵՑ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դեկտեմբերի 26-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հանրագումարեց 2013 թվականի գործունեության արդյունքները: Հանդիպմանը նախարար Թամար Սանիկիձեն իր ելույթում խոսեց գերատեսչության կողմից կատարված նախագծերի եւ առաջիկա ծրագրերի մասին: Գործունեության հաշվետվությանը ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, կառավարության անդամները, միջազգային եւ դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

«Իշխանափոխությունից հետո նոր թիմի գլխավոր խնդիրն էր առավել կողմնորոշված դարձնել առկա ռեսուրսները, դրանք ուղղել սոցիալական հարցերի կարգավորմանը»,- հայտարարեց Սանիկիձեն: Նախարարի տվյալներով, 2013 թվականի ընթացքում գերատեսչությունն իրականացրել է մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, «Հազարամյակի մարտահրավեր» նախագծի շրջանակներում, կրթության ոլորտում ներդրվել է 140 միլիոն դոլարի ներդրում, սկսվել է 9 նոր դպրոցների շինարարությունը, իրականացվել է 600 դպրոցի վերանորոգումը, 80 դպրոցներում անցկացվել է գազիֆիկացում եւ մոնտաժվել են ջեռուցման համակարգեր:

Առանձնակի ուշադրություն է հատկացվել ուսուցիչների սոցիալական ու տնտեսական պայմանների բարելավմանը: Մասնավորապես, դպրոցի ուսուցիչների աշխատավարձն ավելացվել է 26-ից մինչեւ 60 տոկոս: Ավելացվել է նաեւ վարչա-տեխնիկական անձնակազմի աշխատավարձը՝ 40-45 տոկոսով: Շուրջ կես միլիոն աշակերտների հանձնվել են անվճար դասագրքեր, ընդհանուր առմամբ 5 միլիոն 900 հազար լարիի արժողության: Տրանսպորտային միջոցներ են հատկացվել երկրի մասշտաբով 913 դպրոցների եւ այդ միջոցները սպասարկում են 46520 աշակերտի: Վրաստանի բոլոր դպրոցներն ապահովվել են համապատասխան գույքով:

Նախարարությունը հաշվետու ժամանակահատվածում մշակել է ինկլյուզիվ կրթության աջակցության ռազմավարությունը, գործարկվել են նոր նախագծեր:

Կրթության համակարգի աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման համար մշակվել են գրադարանավարների, դպրոցների տնօրենների եւ ուսուցիչների մասնագիտական չափորոշիչները:

Ընթացիկ տարում պետությունը ստանձնեց մասնագիտական ուսուցման ֆինանսավորման պարտավորությունը: Ընդհանուր առմամբ, ֆինանսավորում է ստանում շուրջ 9 հազար ուսանող:

Բարձրագույն կրթության համակարգում ծրագրված 17 ֆակուլտետում ընդունվել է 3529 ուսանող, իսկ պետության կողմից ֆինանսավորվող ուսանողների թիվը հասցվել է 9981-ի: Սոցիալական ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 1411 ուսանող, այն դեպքում, երբ 2012 թվականին նմանների թիվը հասնում էր 798-ի: Այս տարի առաջին անգամ ֆինանսավորում ստացան սոցիալապես անպաշտպան ուսանողները, որոնք բուհ էին ընդունվել 2011-2012 թվականների միասնական ազգային քննությունների արդյունքներով:

Այս տարի գործարկվեց նաեւ մագիստրատուրայի եւ դոկտորանտուրայի ֆինանսավորման սոցիալական ծրագիրը: Այս տարի այդ ծրագրով ֆինանսավորում ստացան 65 մագիստրոսներ եւ 137 դոկտորանտներ: Ինչ վերաբերում է կրթաթոշակներին, ապա 2013 թվականին պետական կրթաթոշակներ են ստացել 2717 ուսանողներ:

Անդրադառնալով 2013-2020 թվականների ռազմավարական ծրագրին, Թամար Սանիկիձեն նշեց, որ 2014 թվականից երկրի տարբեր տարածաշրջաններում կսկսվի մասնագիտական 26 նոր ուսումնարանների հիմնման գործընթացը, կզարգացվեն դրանց ենթակառույցները, կավելացվի ուսուցիչների աշխատավարձը: Նախարարի տեղեկատվությամբ, մշակված ռազմավարության համաձայն, կշարունակվեն երկրի մասշտաբով դպրոցների վերանորոգման, կրթական ենթակառույցների շինարարության, մանկավարժների մասնագիտական մակարդակի բարձրացման միջոցառումները:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԳԱԼԴ ԲԱՐԻ, ՉԻ

Դեկտեմբերի 31-ի գիշերը մենք ճանապարհում ենք Սեւ, Ջրային Օձին եւ դիմավորում՝ Կանաչ, Փայտե Չիուն: Ողջ համաշխարհային մշակույթում՝ ամենահարգի կենդանիներից մեկին՝ պատվի, ազնվության, համբերության եւ, իհարկե, գեղեցկության խորհրդանիշին:

Մնացել են հաշվված օրեր, Փայտե Չին արդեն սմբակներով բախում է մեր դուռը: Ի տարբերություն իմաստուն, առեղծվածային ու նենգ Օձի, Չին ձգտումներ ունեցող եւ ազնիվ էակ է: Նա չի հանդուրժում խարդախություն եւ միշտ պատրաստ է նետվել դեպի նոր, դեպի հրապուրիչ նպատակ:

Լինելով ազատության խորհրդանիշ՝ Չին կբերի թոթափում բոլոր այն կապկպող հանգամանքներից, որոնք սահմանափակում են մարդկանց հարաբերությունները, շփումները, կապերը, իսկ զգացումներում կազատի հնացած համոզումներից:

Այս տարի գնահատվում են խելքի եւ մարմնի ճկունությունը, ամեն մի նորը զերոյից սկսելու ունակությունը եւ՝ հաջողությանը հավատալու կարողությունը:

Քանի որ ինքնակամ Չին կարող է մեզ մատուցել ամենաանսպասելի անակնկալը, ուստի պահանջվում է նրան ժամանակին սանձելու, երբեմն՝ փաղաքշանքով, երբեմն՝ ուժով եւ ամուր կամքով խելքի բերելու ունակություն:

Ողջ տարվա ընթացքում պետք է սպասենք նոր փոփոխությունների: Քանի որ տիբեթյան աստղագիտության մեջ Փայտե Չին համահունչ է երկերեսայնությանը, խորամանկությանը, պահանջվում է՝ հարկ եղած դեպքում լսել, բայց չշտապել վստահել առաջին իսկ պատահածին: Տարին պահանջում է մեզանից՝ քննադատաբար մտածելու կարողություն:

Հաջողություն կբերի ցանկացած ինտելեկտուալ գործունեություն - գիտությունը, ժուռնալիստիկան, վերլուծական գործունեությունը: Բայց քանի որ Չիու համար դժվար է յուլա գնալ ու հարմարվել մեկ ուրիշի, ապա անխուսափելի են վեճերը, ի դեպ, նկատի ունեցեք՝ դյուրին չի լինի զիջել հակառակորդին, որովհետեւ Չին հանդես կբերի իր համառությունն ու կամակորությունը:

Տիբեթյան աստղագիտության համաձայն, փայտի տարերքը կանաչ գույնն է, ուրեմն, գալիք տարուն բնորոշ են կանաչ գույնի բոլոր երանգները: Ամանորյա հագուստ ընտրելիս՝ առավելությունը տվեք մեղմ սալաթագույնից մինչեւ մուգ զմրուխտագույնը, չմոռանաք թեթեւ, կանաչ շարֆերը:

Զարդեղեն ընտրելիս՝ առանց սահմանափակման օգտվեք ե'ւ արծաթից, ե'ւ ոսկուց, ե՛ւ զմրուխտից, ե՛ւ մալախիտից: Սանրվածքը թող լինի փարթամ, վառ, փայլուն վարսակալներով: Հարգի են փայտե հուլունքները, ապարանջանները եւ այլն:

Չին խոտակեր կենդանի է, ուրեմն տոնական սեղանի զարդը պետք է դառնան թարմ բանջարեղենից պատրաստված ամեն կարգի աղանդերը՝ համեմված ըստ ձեր նախասիրության՝ ընկույզով, մայոնեզով...

Օգտագործեք կաղամբ, կանաչեղեն, սալաթի տերեւներ: Հնարավորինս առատ թող լինեն թարմ մրգերը՝ կանաչագույնի առավելությամբ՝ խնձոր, տանձ, կիվի...

Իհարկե սեղանին կարող են «ներկա» գտնվել նաեւ մսեղենից եւ ձկնեղենից պատրաստված ուտեստներ:

Գալիք տարվա հաջողության տարրը Մետաղն է. չէ՞ որ մենք Չին պայտում ենք մետաղով, այնպես որ, որպես հաջողության խորհրդանիշ՝ կարող եք մատուցել մետաղյա նվերներ՝ զարդեր, արծաթյա գդալներ, արծանիկներ...

Եվ ամենակարեւորը, թանկագի'ն ընթերցողներ, ձեր տրամադրությունն է՝ ապագայի լավագույն հույսերով ու կյանքի սիրով լի, բարձր, տոնական տրամադրությունը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

ԵՏ ԲԵՐԵՆՔ ՄԵՐ ՊԱՆՐԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԲԱՎԸ

Ամենից առաջ ասեմ, որ մեր՝ Ջավախեթիի պանիրը միշտ էլ աչքի է ընկել իր համուհոտով, սննդարարությամբ եւ շուկայում լայն պահանջարկ է ներկայացրել: Այն դասվում է ալպյան երկրների մթերքների շարքը եւ ոչնչով չի զիջում իր որակական հատկություններով: Քաղաքամայր Թբիլիսիում եւս մեր պանիրը առանձնակի պահանջարկ է ներկայացրել եւ առ այսօր էլ այն սեղանի իսկական զարդ է համարվում:

Հիշում եմ ոչ հեռավոր անցյալի կոլտնտեսային տարիները: Մեր անասնապահների հալալ քրտինքով արարվող կաթը ամառային արոտավայրերից առատորեն հոսում էր դեպի պանրայուղգործարանները, տարեկան մինչեւ 25 հազար տոննա: Բոգդանովկայում, այսօրվա Նինոծմինդայում, արտադրվող շվեյցարական, հոլանդական մակնիշի պանիրները հասնում էին մինչեւ Մոսկվա ու Լենինգրադ, Կիեւ ու Խարկով, Նովոսիբիրսկ, իհարկե, նաեւ Երեւան, եւ դրանց հռչակը տարածվել էր, ինչպես ասում են՝ աշխարհով մեկ: Նշված պանրատեսակները մշտական գրանցում ունեին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում եւ, որ, թող համեստությունը ների, իմ լուսանկարը մի ամբողջ հնգամյակ փակցված էր այդտեղ, պատվո վահանակին: 1981 թվականին արժանացել եմ «Պատվո» շքանշանի, առիթ եմ ունեցել մասնակցելու Ֆինլանդիայում կազմակերպված պանիրների համտեսին, որտեղ ներկայացրել եմ իմ կողմից արտադրված շվեյցարական եւ այլ տեսակի պանիրներ եւ արժանացել առաջին մրցանակի:

Այդպես, ստանալով համապատասխան կրթություն ու որակավորում, երկար տարիներ աշխատել եմ շրջանի տարբեր պանրագործարաններում, իսկ 1984-ից մինչեւ 1994 թվականը եղել եմ Բոգդանովկայի գլխավորող պանրայուղգործարանի ավագ վարպետ, մինչեւ ձեռնարկության լուծարումը:

Գիտեք, որ Բոգդանովկայի շրջանում շվեյցարական պանրի արտադրամաս առաջին անգամ բացել են գերմանացիները, 1896 թվականին՝ Ռոդիոնովկա եւ Գորելովկա գյուղերում: Փորձարկումը անցել է հաջողությամբ եւ դա վկայում է, որ Ջավախեթիի լեռնային արոտավայրերի կաթը իրոք բարձրորակ պանիրների արտադրության լավագույն հումք էր: Նշված պանիրների արտադրության նորագույն տեխնոլոգիան արմատավորվեց երկրորդ համաշխարհայինի ավարտից հետո, այդպես, մինչեւ խորհրդային կարգերի փլուզումը:

Այսօր, ցավոք, Նինոծմինդայի շրջանում չկա այնպիսի կենտրոնացված ձեռնարկություն, որը զբաղվի պանիրների արտադրությամբ: Ասել, թե բարձիթողի է արված պանրի գործը, ճիշտ չի լինի: Կան փոքր ձեռնարկություններ, որոնք առանձին ֆերմերներից կաթը գնում են եւ զբաղվում պանրագործությամբ:

Անհամեստություն չհամարեք, բայց ես խնդիր եմ դրել շարունակել պանիրների պատրաստման մեր նախկին ավանդները եւ կոնկրետ զբաղվում եմ այդ խնդրով: Անցյալ դարավերջին ստեղծեցի «ՎԱՆ-412» փոքր ձեռնարկությունը: Տարեկան միջին հաշվով պատրաստում էի 30 տոննա տարբեր տեսակի պանիրներ («Վրացական», «Լոռի», «Կովկասյան», «Սուլուգունի»): Եվ մեր արտադրանքը գնալով ընդլայնում է իր աշխարհագրությունը, հիմնականում Թբիլիսի եւ երկրի այլ վայրեր:

2006 թվականին մենք համագործակցեցինք փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը նպաստող անգլո-ամերիկյան միջազգային «Բիզնեսի եւ զարգացման Կովկասյան ցանց» կազմակերպության հետ: Մասնագետները պարզել էին, որ Հայաստանի Շիրակի, Թուրքիայի Կարսի մարզերում եւ Ջավախեթիում արտադրվող կաթը լավագույն բազա է պանրի մի նոր տեսակի արտադրության համար: Նշված տարածքների մասնագետներս համատեղ մշակեցինք նոր պանրի պատրաստման տեխնոլոգիա եւ ստացանք պանրի նոր տեսակ, այն անվանելով «Կովկասյան»: Ներկայումս այդ տեսակն արտադրվում է նշված մարզերում եւ լայն ճանաչում է գտել սպառողների կողմից, ստացվում են պատվերներ տարբեր վայրերից: Մեր առաջիկա գործունեությունը մենք նպատակամղում ենք այդ ուղղությամբ եւ տարակույս լինել չի կարող, որ «Կովկասյան» տեսակի պանիրը է'լ ավելի լայն ընդունելություն կգտնի սպառողների շրջանում եւ կընդլայնի իր աշխարհագրությունը: Ի դեպ, 2012 թվականից սկսել ենք համագործակցել ֆրանսիական «Մերսի Կորպե» կազմակերպության հետ, որի նպատակն է աջակցել եւ նպաստել փոքր ֆերմերային տնտեսությունների զարգացմանը:

Օգտվելով ինձ ընձեռած հնարավորությունից՝ ի սրտե շնորհավորում եմ Քրիստոսի Սուրբ Ծնունդը եւ Ամանորը: Իմ անկեղծ շնորհավորանքներն եմ հղում «Վրաստան» թերթի աշխատակազմին, բոլոր ընթերցողներին, Նինոծմինդայի շրջանի եւ, իհարկե ողջ Վրաստանի բնակչությանը, ցանկանում խաղաղություն, առողջություն եւ հետագա հաջողություններ:

ՎԱՆԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ք. Նինոծմինդա

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Ð°î²øðøð²Î²Ü

ԱՄԱՆՈՐԸ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՏԱՐԻ՞

Ինչո՞ւ ենք Նոր տարին երբեմն անվանում Ամանոր: Ի՞նչ խորհուրդ է բովանդակում այդ հասկացությունը:

Մ.ՍԱՀԱԿՄԱՆ

Նինոծմինդա

Ամանորը հայկական ազգային տոնացույցի առաջին տոնն է, կոչվել է նաեւ կաղանդ, տարեմուտ, տարեգլուխ: Ըստ մեզ հասած տվյալների՝ վաղնջական ժամանակներում հայերը Նոր տարին դիմավորել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը, ինչը խորհրդանշում է բնության զարթոնքը եւ գարնան սկիզբը:

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը՝ օգոստոսի 11-ը: Ըստ ավանդության՝ Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին: Այս հաղթությունը տեղի է ունեցել մ.թ.ա. 2492 թվականի օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ, որ նշանակում է Նոր տարի:

18-րդ դարում՝ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ՝ ընդունվեց հունվարի 1-ը՝ համապատասխանեցվելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ: Սակայն նույնիսկ մինչեւ 19-րդ դարի կեսերը հայկական շատ գավառներում (Սյունիք, Արցախ, Ուտիք) Նոր տարին շարունակում էին տոնել օգոստոսին:

Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը՝ որպես տարվա սկիզբ: Նոր տարին սկսվում էր դեկտեմբերի 30-31-ին՝ ամանորյա խմորեղենի պատրաստմամբ: Հունվարի 1-ին մեծերն այցելում էին միմյանց եւ շնորհավորում խնձորով, ընկույզով ու նարինջով: Գյուղերում տան տղամարդիկ պարտադիր կերպով գնում էին շնորհավորելու քահանային ու գյուղապետին՝ տանելով իրենց հետ միրգ եւ ըմպելիք:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քրիստոնեական տարբեր ուղղությունները տարբեր օրեր են նշում Սուրբ Ծնունդը: Մենք, հայերս այդ մեծ տոնը նշում ենք հունվարի 6-ին, Ուղղափառները՝ հունվարի 7-ին, իսկ կաթոլիկները, տարվա մայրամուտին՝ դեկտեմբերի 25-ին: Ինչո՞վ է դա պայմանավորված:

Ս.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Ախալքալաքի

Սուրբ Ծնունդը աշխարհի քրիստոնյաների ամենամեծ եւ սիրված տոներից է: Իր թե՛ նշանակությամբ, էությամբ եւ թե՛ խորհրդով, Ամանորը զիջում է Ս.Ծննդյանը: Ամանորն ինքնին օրացուցային փոփոխման երեւույթ է, եւ իր մեջ որեւէ խորհուրդ չունի: Իսկ Ս.Ծնունդը ամբողջությամբ խորհին խորհուրդ է՝ Աստծո Որդու Ծնունդը, որը մարդկության համար դառնում է նոր ու անվերջանալի սկիզբ: Իզուր չէ, որ շուրջ 2000 տարի մարդկությունը իր տոմարական բոլոր հաշվարկները կապում է Քրիստոսի ծննդյան հետ՝ նախքան Քրիստոս եւ Քրիստոսի Ծնունդից հետո:

Սուրբ Ծննդյանը նախորդում է պահք, որը սկսվում է դեկտեմբերի 30-ին եւ ավարտվում հունվարի 5-ի երեկոյան՝ ճրագալույցի Ս.Պատարագով: Այս շրջանում բացառվում է կենդանական սնունդ: Հոգեւորականները հորդորում են Ամանորը դիմավորել եկեղեցում, խորհել հոգեւոր վիճակի մասին եւ ստանալ Աստծո օրհնությունը:

Ինչո՞ւ են քրիստոնեական եկեղեցիները Հիսուս Քրիստոսի Ծննդյան օրը տարբեր օրերի նշում:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնը նշում է հունվարի 6-ին: Կաթոլիկ եկեղեցին այդ տոնը նշում է դեկտեմբերի 25-ին:

Մինչեւ 4-րդ դարը բոլոր քրիստոնյաները Սուրբ Ծնունդը նշել են հունվարի 6-ին: Սակայն, անգամ քրիստոնեության ընդունումից հետո հռոմեացիները շարունակում էին հեթանոսական տոներ նշել: Բանն այն է, որ դեկտեմբերի 25-ին մեծ շուքով նշվում էր արեւի պաշտամունքին նվիրված տոնը: Հեթանոսական ավանդույթները խափանելու համար 336թ. Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես հռչակեց Հիսուս Քրիստոսի Ծննդյան օր: Հետագայում Ասորիքում եւ գրեթե ողջ արեւելքում Քրիստոսի Ծննդյան տոնի օրը փոխադրվեց դեկտեմբերի 25-ին, իսկ հունվարի 6-ը մնաց որպես Տիրոջ Աստվածահայտնության՝ Մկրտության օր:

Հնագույն ավանդության եւ ավետարանական հաշվարկներին հավատարիմ է մնացել միայն Հայ Առաքելական Ս.Եկեղեցին՝ հունվարի 6-ին միասնաբար նշելով Քրիստոսի Ծննդյան եւ Աստվածահայտնության տոները:

ԱՌՕՐԵԱԿԱՆ

ԶՐՈՒՅԵԼՈՒ ԱՐՎԵՍՏ

Մի՛ փորձեք անդադար խոսել: Այդպես դուք չեք կարողանա լսել դիմացինին եւ նրան արտահայտվելու հնարավորություն չեք տա: Հիշեք հին ասացվածքը. «Աստված մարդուն երկու ականջ է տվել եւ միայն մեկ բերան»:

Բացառեք որեւէ խոչընդոտ. երբեք մի՛ նկարեք, մատներով մի՛ թխկթխկացրեք, թղթերը մի խշխշացրեք այն ժամանակ, երբ զրուցում եք: Դա շատ է խանգարում, եւ ցույց է տալիս, որ զրուցակցի խոսքերը ձեզ չեն հետաքրքրում:

Միշտ ուղիղ պատասխան տվեք: Ուղիղ հարցին տված անորոշ պատասխանը մարդկանց հունից հանում է: Խորհուրդ հարցրեք եւ խնդրեք օգնել: Դա դրական փոխհարաբերությունների հաստատման միջոցներից մեկն է: Մարդկանց դուր է գալիս իրենց գիտելիքներն ու ընդունակություններն ի ցույց դնելը եւ նրանց հաճելի կլինի ձեր խնդրանքը կատարել:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՏՈՆԱԾԱՌԻ ԱՆՎՏԱՆԳ ԶԱՐԴԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ամանորին ընդառաջ տոնի գլխավոր խորհրդանիշ տոնածառի անվտանգության կանոններին հետեւելն անհրաժեշտություն է:

Անվտանգության կանոններից ելնելով՝ բնակարանում տոնածառը թույլատրվում է տեղադրել ամուր պատվանդանի վրա, ընդարձակ սենյակում, որն ունենա մեկից ավելի տարհանման ելք: Հարկավոր է հետեւել, որ տոնածառի շրջապատն ազատ լինի զանազան դյուրավառ իրերից, իսկ ճյուղերը չդիպչեն պատերին ու առաստաղին:

Չի թույլատրվում տոնածառը տեղադրել անցումների վրա, միջանցքներում, դռան առջեւ, իսկ հեռավորությունը դյուրավառ իրերից ու առարկաներից պետք է լինի 1 մետրից ոչ պակաս: Տոնածառի էլեկտրալուսավորությունը պետք է անցկացնի մասնագետը՝ փակ հաղորդալարերով եւ էլեկտրատեխնիկական նորմերի ու կանոնների պահպանմամբ: Լուսավորության համար պետք է օգտագործել 12 վոլտից ոչ ավելի հզորության էլեկտրալամպեր, իսկ դրանց ու լարերի միացման տեղերն անպայման զոդել եւ հուսալիորեն մեկուսացնել: Շատերը տոնածառը զարդարելիս օգտագործում են բամբակ, թուղթ, պլաստմասե խաղալիքներ, երեխաների համար բամբակից կոստյումներ են կարում, մինչդեռ այդ բոլորը դյուրավառ նյութեր են եւ բավական է մի փոքրիկ կայծ, որ տեղի ունենա բռնկում ու հրդեհ:

Արգելվում է տոնածառը լուսավորել մոմերով, բենգալյան կրակով հրավառություն անել եւ այդ սենյակում օգտագործել բաց կրակ: Խստորեն արգելվում է տարբեր տեսակի հրավառությունների, ճայթռուկների, հատկապես՝ չինական արտադրության, օգտագործումը, որոնք խիստ հրդեհապայթյունավտանգ են: Չի թույլատրվում փոքրահասակ երխաներին թողնել տոնածառների մոտ առանց հսկողության:

Ինչ վերաբերում է հրավառություններին, ապա բաց հրապարակներում հատուկ էֆեկտների կիրառման անհրաժեշտության դեպքում, հրդեհները կանխելու նպատակով պատասխանատու բեմադրիչը (գլխավոր ռեժիսորը, գեղարվեստական ղեկավարը) պետք է ձեռնարկի համապատասխան հակահրդեհային միջոցառումներ: Զանգվածային միջոցառումների ժամանակ հնարավոր հրդեհներ, բարձր ջերմաստիճանային բոցավառումներ, պայթյուններ առաջացնող հրագործական արտադրատեսակներ օգտագործելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել դրանց վտանգավորության աստիճանը, որոշել անվտանգության գոտիները, նախատեսել հրդեհաշիջման միջոցները: Հրթիռներից կրակելու ուղղությունը պետք է ընտրել այնպես, որպեսզի չայրված աստղիկները գետնին ընկնելու դեպքում բացառվի հրդեհի բռնկումը:

Ավելացնենք, որ անվտանգության կանոնների պահպանումը մեծ ջանքեր չի պահանջի, փոխարենը կապահովի անվտանգությունն ու բարձր տրամադրությունը ամանորյա հանդիսությունների ժամանակ:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԳՈՒՄԱՐ ԾԱԽՍԵԼ ՄԹԵՐՔՆԵՐ ԳՆԵԼԻՍ

Ամենից առաջ, մինչեւ գնումների գնալը, ձեր պաշարների մի փոքրիկ ստուգում անցկացրեք, լրացուցիչ գնելու կարիք չկա, եւ «հինն» էլ ավելորդ չէ:

Կազմեք այն կերակուրների մոտավոր ցուցակը, որոնք պետք է պատրաստեք: Այդ ձեւով ավելի հեշտ կկողմնորոշվեք, թե ինչ բաղադրիչներ են անհրաժեշտ լինելու եւ կազատվեք գնումներ կատարելիս ավելորդ մտքերից՝ «ուտելիքը բավականաչա՞փ կլինի, թե՞ ոչ», նաեւ կխուսափեք «մեկ էլ տեսար՝ պատրաստեցի» մտայնությամբ տարբեր մթերքներ գնելու գայթակղությունից: Իսկ շուկա ուղեւորվելիս, հիշեք, որքան երեկոյան կողմ գնաք, այնքան քիչ կծախսեք:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:

ԵՂԻՇԵ
V դար
Հայ պատմիչ

Երբ տարիքի ծանր բեռից կռանում ենք եւ աղեղվում, ծանծրալի ենք դառնում արդեն, եւ բոլորն են մեզնից նեղվում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՎԾԱՎԱՉԵ
(1786-1846)
Վրաց բանաստեղծ

Յուրաքանչյուր լուսաբաց դիմավորիր որպես կյանքիդ սկիզբ, իսկ յուրաքանչյուր մայրամուտ՝ որպես կյանքիդ ավարտ: Եվ այդ կարճ կյանքերից յուրաքանչյուրը նշանավորիր որեւէ բարի գործով, որեւէ հաղթանակով կամ գիտելիքի ձեռքբերմամբ:

ՋՈՆ ՌԵՍԿԻՆ
(1819-1900)
Անգլիացի գրող

Կյանքի դպրոցում սովորելը պարտադիր է, դրանից ոչ մեկը չի կարող խուսափել:

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ø²ÜàðÚ² ²Ü°Î¸à†Ü°ð

** Եթե առավոտ վաղ բոլորը խայտառակ եղածի պես ամաչում են, ուրեմն տոնը ստացվել է...*

** Հարց. Ո՞րն է միայնակությունը՝ բառիս բուն իմաստով.*

«Երբ Նոր տարուն քեզ շնորհավորում է միայն նախագահը հեռուստացույցով»:

** Նոր տարվա տոնակատարության երեկո է: Մի կին ասում է հարեւան սեղանակցուհուն.*

- Ինձ թվում է՝ մենք մի անգամ արդեն միասին դիմավորել ենք Նոր տարի 12 տարի առաջ.

- Իսկապե՞ս: Ինչ-որ չեմ հիշում...

- Ինձ մոտ էլ տեսողական հիշողությունը վատ է, բայց այ հագուստների առումով՝ անթերի է...

** - Հայրիկ, գուշակիր, թե որ գնացքն է ամենից շատ ուշանում:*

- Չգիտեմ, տղաս, ո՞որը:

- Այն գնացքը, որը դու խոստացել էիր նվիրել նախանցյալ տարի...

** Նոր տարուց հետո հանդիպում են երկու ընկեր.*

- Հը՞, ո՞նց դիմավորեցիր Նոր տարին:

- Դե, վատ չէր, իսկ դու՞:

- Չգիտեմ, դեռ չեն պատմել:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ» ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Աշխատանքային այցով Ռուսաստանի Դաշնությունում գտնվող Նախագահ Սերժ Սարգսյանը դեկտեմբերի 24-ին Մոսկվայում մասնակցեց Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի ընդլայնված կազմով նիստին, որը կայացել է Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Հայաստանի ու Ղրղզստանի նախագահների եւ Ուկրաինայի վարչապետի մասնակցությամբ:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը՝ պետությունների ղեկավարների մակարդակով, ի թիվս այլ հարցերի որոշում է ընդունել Մաքսային միությանը եւ Բելառուսի, Ղազախստանի եւ Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի միանալու միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզի») մասին: Որոշմամբ խորհրդի անդամները հաստատել են միջոցառումների ծրագիրը («ճանապարհային քարտեզը»):

Նիստի արդյունքում Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահները հայտարարություն են ստորագրել Մաքսային միությանը եւ Բելառուսի, Ղազախստանի եւ Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի միանալու միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզի») մասին:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 3-ին Մոսկվայում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Հայաստանի որոշման եւ այդ նպատակով անհրաժեշտ կատարելիք քայլեր ձեռնարկելու մասին, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միության ձեւավորմանը մասնակցելու վերաբերյալ:

41 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Եվրոպական միությունն ընդունել է 41 մլն եվրո արժողության փաստաթղթերի փաթեթ Հայաստանի քաղաքացիական հասարակությանը, տարածաշրջանային զարգացմանը եւ գյուղատնտեսությանն աջակցելու նպատակով: Այս օժանդակությունը տրամադրվում է եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում:

Գյուղատնտեսության ու գյուղական համայնքների զարգացմանն ուղղված ԵՄ նոր նախաձեռնությունների (25 միլիոն եվրո) նպատակն է բարելավել գյուղատնտեսական կառույցների գործունեությանը, նպաստել ֆերմերների ասոցիացիաների զարգացմանը եւ ապահովել Հայաստանում քաղաքացիներին ավելի մատչելի մթերքի տրամադրմանը:

Տարածաշրջանային զարգացման ոլորտում ծրագիրը (10 միլիոն եվրո) կաջակցի առանձին ծրագրերին (օրինակ՝ հանրային-մասնավոր համագործակցություն, աշխատատեղերի ստեղծում, անձնակազմի վերապատրաստում) նպաստելով Հայաստանի համայնքների տնտեսական զարգացմանը: Օժանդակության նպատակն է նաեւ հզորացնել քաղաքացիական հասարակության դերը (6 միլիոն եվրո), որպես երկկողմ համագործակցությունը խթանելու եւ բարեփոխումների մոնիտորինգն ապահովելու ԵՄ-ն կարեւոր գործընկերոջ:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒ. «ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՇԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԽԱԼ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ Է»

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն, Հայաստանի մայրաքաղաքում անցկացված Սեւծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) երկրների արտգործնախարարների հավաքից հետո, Երեւանից մեկնող ինքնաթիռում, թուրք եւ արտասահմանյան լրագրողների հետ զրուցելիս փորձեց փաթեթավորել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ թուրքական նախապայմանները: Դավութօղլուն 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում հայերի տեղահանությունը անմարդկային է անվանել: «Իթթիհաթականների կատարածը սխալ եւ անմարդկային է»,- հայտարարեց Դավութօղլուն՝ հավելելով, որ դա Օսմանյան կայսրության կատարածն է եւ թուրքական ներկա պետությունը դա իր վրա չի վերցնում:

Դավութօղլուն շրջանառության մեջ է մտցրել նոր թեզ, իբր աշխատանք է տարվում երկու երկրների միջեւ շարունակվող «անշարժությունը հաղթահարող կառուցողական առաջարկի» վրա: Նա նշել է, իբր, այդ ուղղությամբ վերջին ամիսներին Բաքվից նույնպես դրական ուղերձներ է ստացել, սակայն, խուսափել է հայտնել մանրամասներ:

Դավութօղլուն, միեւնույն ժամանակ, նշել է, որ Թուրքիայի հիմնական նպատակը Հայաստանի հետ սահմանը բացելը չէ: Այդ գործընթացը դանդաղեցնելը Թուրքիայի ԱԳՆ ղեկավարը փաթեթավորել է Կովկասում մնայուն խաղաղության հաստատման համար պայմաններ ստեղծելու թեզով: Ըստ նրա՝ այդ գործը երեք «ոտք» ունի: Առաջինը՝ Հայաստանի եւ Թուրքիայի, երկրորդը՝ հայ-ադրբեջանական, երրորդը՝ հայ եւ թուրք ժողովուրդների հարաբերություններն են, որոնք պետք է կարգավորվեն: «Երեք ոտքերից մեկը եթե վնասվի, խնդիրներ կառաջանան: Ասենք՝ սահմանը բացեցինք, եթե վաղը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ պատերազմ սկսվի, դարձյալ ստիպված կլինենք փակել»,- ասել է նա:

Դավութօղլուն թուրք-հայկական հարաբերությունների կարգավորման գործում դարձյալ մեղադրել է հայկական սփյուռքին՝ նշելով, որ սփյուռքը ճնշում է գործադրում այդ հարաբերությունների վրա, ինչի պատճառով «գործն առաջ չի գնում»:

ԱՎԻԱՏՈՄՍԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՎԱՃԱՌՔԻ ԵԶԱԿԻ ԿԱՅՔ

Հայ նորարարները գալիք տարեսկզբին լիարժեք շահագործման կհանձնեն ավիատոմսերի առցանց վաճառքի կայք, որը եզակի է տարածաշրջանում: Skyfly.am կայքը հնարավորություն կտա աշխարհի ցանկացած անկյունից ձեռք բերել ավիատոմսեր՝ ամենամատչելի եւ հարմար տարբերակով:

Այդ մասին հայտարարեց ավիատոմսերի վաճառքի www.skyfly.am կայքի հիմնադիրներից Միքայել Սաղյանը: «Մեր կայքը վաճառում է ավիատոմսեր ամենամատչելի գներով: Դրա համար այն փնտրում է 5 գլոբալ համակարգերից եւ գտնելով ամենաէժան գինը՝ տրամադրում է հաճախորդին»,- ասաց Սաղյանը: Կայքը հայերեն է, շահույթը ստանում է միջնորդավճարներից: Կայքի ստեղծման աշխատանքները մեկնարկել են 8 ամիս առաջ: Հեղինակները նախատեսում են մուտք գործել նաեւ վրացական շուկա:

ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՔՍԱԿԵՏԵՐՈՒՄ

Չինաստանի կառավարության եւ Հայաստանի Պետական եկամուտների կոմիտեի գործակցության արդյունքում Մաքսային ծառայությունը համալրվել է ռենտգենյան զննման գերժամանակակից համակարգով:

Նոր սարքավորման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն տարբերվում է մաքսային ծառայությունում, մասնավորապես, Մեղրիի եւ Բագրատաշենի մաքսակետերում գործող նմանատիպ սարքավորումներից: Այն շարժական է, ինչը հնարավորություն է տալիս տարբեր ժամանակահատվածներում եւ ըստ անհրաժեշտության համակարգը շահագործել մաքսային հսկողության տարբեր գոտիներում, այդ թվում՝ մաքսակետերում, մաքսային պահեստներում եւ ընդհանրապես, ցանկացած վայրում: Սարքը կարող է աշխատել էլեկտրասնուցմամբ, իսկ 40 կվտ հզորությամբ դիզելային գեներատորի շնորհիվ՝ նաեւ ինքնավար: Համակարգը հնարավորություն է տալիս ռենտգենյան սկանավորման միջոցով արագ եւ ճշգրիտ ստուգել բեռնատարների, բեռնարկղերի պարունակությունը, ինչպես նաեւ դրանց համապատասխանությունը մաքսային հայտարարագրի, բեռն ուղեկցող փաստաթղթերի հետ: Շուրջօրյա ռեժիմով սարքն ունակ է մեկ ժամում զննելու մինչեւ 4.6մ բարձրությամբ եւ 2.6մ լայնությամբ 15-20 բեռնատար, սկանավորման արագությունը կազմում է 0.2-0.4մ/վրկ, ընդ որում, մեկ քայլով կարող է սկանավորել հաջորդաբար կանգնած մինչեւ 4 բեռնատար: Աշխատանքային տարածքը հսկվում է ահազանգման հատուկ համակարգով: Հաշվի առնելով հայ-վրացական սահմանին շրջանցիկ ճանապարհների առատությունը՝ նմանատիպ շարժական սարքի օգնությամբ հնարավոր կլինի ավելի արդյունավետ պայքարել նաեւ մաքսանենգ բեռնափոխադրողների դեմ:

ՄԻՋԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

Հայաստանում հունվարի մեկից միջին կենսաթոշակը 31 հազար դրամից կբարձրացվի 36 հազարի: Այդ մասին ՀՀ կառավարության նիստում հայտարարեց Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը: Կառավարությունը հաստատեց կենսաթոշակի հիմնական չափը՝ 14 հազար դրամ: Առաջին տասնամյակում ամեն տարվա համար աշխատանքային ստաժը կկազմի 700 դրամ, իսկ դրանից հետո յուրաքանչյուր տարին՝ 450 դրամ: Հայաստանում միջին կենսաթոշակը հունվարի մեկից կբարձրանա 15 տոկոսով:

ԱՐՑԱԽԸ ՏԱՐԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ Է ՀՆԱ-Ի 9 ՏՈԿՈՍ ԱՃՈՎ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը 2013թ.-ը փակում է համախառն ներքին արտադրանքի՝ ՀՆԱ-ի 9 տոկոս իրական աճով: Այս մասին տարեվերջյան ասուլիսում նշեց ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը: Ամփոփելով անցնող տարվա սոցիալ-տնտեսական արդյունքները՝ կառավարության ղեկավարն ասաց, որ, չնայած պետբյուջեով տարեսկզբին նախատեսված եկամուտներն ամբողջությամբ չեն մուտքագրվել, սակայն դա էապես չի ազդել կառավարության՝ հիմնական ծախսային ծրագրերի իրականացման արդյունավետության վրա:

Խոսելով 2014թ. պետական բյուջեի ու կառավարության նախատեսած ծրագրերի մասին՝ վարչապետն ասաց, որ եկող տարի եւս նախատեսված է ապահովել 9-10 տոկոս ՀՆԱ-ի աճ: «Գալիք տարում կառավարության բյուջետային ծրագրով նախատեսված է հետեւողականորեն զարգացնել առկա ֆեռքբերումները, ինչպես նշված, այնպես էլ տնտեսության մյուս բնագավառներում»,- ավելացրեց Հարությունյանը

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Հայաստանի մշակույթի նախարարությունը Գյումրի տեղափոխվելու խնդիրը քննարկման փուլում է: Այս մասին դեկտեմբերի 24-ին նշեց Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: «Հարցը քննարկման փուլում է: Քանի որ դա հեշտ խնդիր չէ, եւ, երբ վերջնական դիրքորոշումը հայտնելու լինենք, անպայման բոլորը տեղյակ կպահվեն, եւ գյումրեցիները կիմանան այդ մասին: Ես այստեղ խնդիր չեմ տեսնում»,- նշեց նախարարը:

Նա եւս մեկ անգամ հերքեց որոշ լրատվամիջոցների կողմից ներկայացված այն կարծիքը, թե ինքը դեմ է մշակույթի նախարարությունը Գյումրի տեղափոխելուն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 21-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն ԱԳՆ հյուրերի տանը հանդիպել է Պոլսո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանի հետ: Հանդիպումն սկզբում անցել է մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ, իսկ հետո շարունակվել է փակ դռների հետեւում: Արամ Աթեշյանը Դավութօղլուին գիրք է նվիրել, իսկ Դավութօղլուն Աթեշյանին նվիրել է նկարազարդ ափսե: Այլ մանրամասներ առայժմ չեն հաղորդվում:

ՊԱՐՏԱԳԻՐ ԱՊԱՇՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆՆԵՐ ՉԵՆ ՏՐԱՄԱԴՐՎԻ

2014 թվականի հունվարի 1-ից ավտոմեքենաների դիմապակուն փակցնելու համար ԱՊՊԱ կտրոններ չեն տրամադրվի: Սահմանված ժամկետում ԱՊՊԱ պայմանագիր չկնքելու համար սահմանված է տուգանք՝ յուրաքանչյուր տասն օրվա համար նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5000 դրամ) չափով, իսկ առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու տրանսպորտային միջոցը վարելու համար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100000 դրամ) չափով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

28.12.2013. Սուրբ Որոտման որդիների՝ Հակոբոս առաքյալի եւ Հովհաննես ավետարանչի հիշատակության օր

29.12.2013. Բարեկենդան Սուրբ Ծննդեան պահոց

Սուրբ Ծննդյան պահքի Բարեկենդանն անփոփոխ նշվում է դեկտեմբերի 29-ին, այսինքն՝ Սուրբ Ծննդից 7 օր առաջ: Սուրբ Ծննդյան պահքն իր մեջ ընդգրկում է նաեւ Նոր տարվա տոները մինչեւ հունվարի 5-ը՝ Սուրբ Ծննդյան երգալույցը:

ՕԾՎԵԾ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 21-ին, ծեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանի, Մառնեուլիի շրջանի եւ հարակից գյուղերի հոգեւոր հովիվ Տեր Մովսես քահանա Աշուրյանի եւ հոգեւոր դասի ներկայացուցիչների, օծվեց Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Օծման արարողությանը ներկա էին «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Հայերի համաշխարհային ասամբլեայի վարչության անդամ, թբիլիսցի բարերար Ռաֆիկ Աղաջանյանը, շրջանի գամգեբելու լիազոր ներկայացուցիչ Արարատ Հակոբյանը, Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը, Գարրի Դավթյան տիկնիկային մշակույթի տան տնօրեն Ժանա Դավթյանը, բարերար Միքայել Արաբաջյանը, Մառնեուլիի շրջանից ընտրված Շահումյան ավանի սակրեբուլոյի պատգամավոր Էդուարդ Գասպարյանը, տեղի հանրային թիվ 1 դպրոցի տնօրեն Արտյուշ Ուրումյանը, Կարմիր գյուղի դպրոցի տնօրեն Հմայակ Սայադյանը եւ ուրիշներ: Շահումյանի Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1715-20-ական թվականներին ժողովրդի միջոցներով:

Եկեղեցու օծումից հետո մատուցվեց անդրանիկ Սուրբ Պատարագը: Պատարագիչն էր Տեր Հուսիկ քահանա Հարությունյանը:

Հավարտ Սուրբ Պատարագի ներկա հասարակությանն օրհնության եւ գնահատանքի խոսքով դիմեց թեմական առաջնորդը: Սրբազան հայրը շնորհավորեց շահումյանցիներին եկեղեցու բացման կապակցությամբ, գնահատանքի խոսքեր ուղղեց բարերարներ Հրաչ եւ Վիտալի Մանասյաններին, Միքայել Արաբաջյանին, Վիրահայոց թեմի վարչա-տնտեսական բաժնի պատասխանատու Կարեն Երիցյանին, Տեր Հուսիկ քահանա Հարությունյանին, որոնց ջանքերով վերանորոգվեց այս եկեղեցին ու նվիրվեց ավանի հայ ազգաբնակչությանը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՊԱՐԱՐՎԵՍՏ

ԿԱՆՑԿԱՑՆԵՆ ՀԱՄԱՏԵՂ ՓԱՌԱՏՈՆ

Վրաստանի եւ Հայաստանի պարարվեստի միությունների միջեւ դեկտեմբերի 26-ին ստորագրվեց համագործակցության հուշագիր: Հուշագիրը ստորագրեցին Վրաստանի պարարվեստի միության ղեկավար Ռեզո Ճանիշվիլին եւ Խանամիրյանի անվան պարարվեստի միության նախագահ Գագիկ Մխիթարյանը:

Ըստ ստորագրված համաձայնագրի՝ կողմերի նախաձեռնությամբ 2014 թվականի մայիսին Հայաստանում կանցկացվի պարարվեստի փառատոն, որին կմասնակցեն պարախմբեր Հայաստանից, Վրաստանից, Աբխազիայից եւ Հյուսիսային Օսեթիայից:

«Մեկ տարի առաջ նոյեմբերին մեզ հրավիրեցին Թբիլիսի, եւ մենք այնտեղ արժանացանք ջերմ ընդունելության: Քննարկեցինք Հայաստանի եւ Վրաստանի միությունների համագործակցության հարցը: Վրացական կողմը մեծ պատվիրակությամբ առաջին անգամ է ժամանել Հայաստան: Հաջորդ տարի կայանալիք փառատոնին կմասնակցեն 100-ից ավելի պարողներ: Բեմի վրա հայերի եւ վրացիների միջեւ կհաստատվի բարեկամություն, կստեղծվի «պարային» դիվանագիտություն»,- նշեց Խանամիրյանի անվան պարարվեստի միության նախագահ Գագիկ Մխիթարյանը: Վրաստանի պարարվեստի միության ղեկավար Ռեզո Ճանիշվիլին հայտարարեց. «Ինձ թվում է՝ ես լավ գիտեմ հայկական ֆոլկլորը եւ կարող եմ ասել, որ Հայաստանը պետք է եւ կարող է հպարտանալ իր պարային արվեստով: Վրաստանում մենք ամեն ինչից կարող ենք զրկվել, սակայն պարից ու երգից՝ երբեք: Երկու երկրների մշակույթը դարերով է գալիս, եւ մենք շատ հարուստ մարդիկ ենք»:

ՀԻՇԱՏԱԿ

ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Վրաստանի լրագրությունը եւ վիրահայ գրականությունը ծանր կորուստ կրեցին: Կյանքի 84-րդ տարում կյանքից հեռացավ Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ, Վրաստանի ժուռնալիստների ֆեդերացիայի անդամ 1967 թ.-ից, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ Սերգեյ Առաքելյանը:



Ծնվել էր 1930 թվականին, Թբիլիսիում: Միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո, Սերգեյը մեկնում է Երեւան, ընդունվում եւ ավարտում Հայկական անասնաբուժական ինստիտուտը, այնուհետեւ՝ Մոսկվայի անասնաբուժական-անասնաբուծական ակադեմիան: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո, Առաքելյանը վերադառնում է ծննդավայր եւ աշխատանքն սկսում մեր՝ «Վրաստան» թերթում: Կարճ ժամանակ անց դառնում է թերթի գյուղբաժնի վարիչ եւ մինչեւ թոշակի անցնելը աշխատում այդ պաշտոնում: Նրան լավ գիտեին Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Ծալկայի, Մառնեուլիի եւ հայաբնակ մյուս շրջանների գյուղացիները: 40 տարի նա պատվով կատարեց լրագրողի իր դժվարին, սակայն հետաքրքիր առաքելությունը, իր հրապարակումներով նվաճելով ինչպես գործընկերների ու ընթերցողների, այնպես էլ՝ շրջանների մարդկանց վստահությունն ու սերը:

Ամենատարբեր մարդկանց հետ շփումները, կյանքի հարուստ փորձը օգնեցին վաստակաշատ լրագրողին իր ուժերը փորձել նաեւ գրական գործունեությունում՝ հանդես գալով ինչպես «Վրաստան» թերթում, այնպես էլ «Կամուրջ» ու «Վերնատուն» տարեգրքերում, հայաստանյան մամուլում իր պատմվածքներով, ակնարկներով, վիպակներով, էսսեներով, սցենարներով: Վերջին 10 տարիներին նա Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության ակտիվ անդամներից էր: Չորս գրքի հեղինակ էր, որոնցից վերջինի՝ «Դոկտոր Սանջայ»-ի շնորհանդեսը կայացավ ընդամենը երկու շաբաթ առաջ «Հայարտանը»:

Զարմանալի է, այո, կյանքի ու մահվան առեղծվածը: Ընդամենը մի քանի օր առաջ բեմից ելույթ ունեցող մարդը, ընդամենը մի քանի օր առաջ խոջիվանքում իր ավագ գործընկերոջ հիշատակը խնկարկող մարդը, անսպասելի, ինքն է հեռանում աշխարհից...

Վերջին տարիներին նրա ընտանիքին պատուհասած դժբախտությունները՝ դստեր անժամանակ մահը, տիկնոջ կորուստը, կոտրել էին Սերգեյ Առաքելյանին: Միշտ մտքերի մեջ ու ցավով լի, հենց փողոցում էլ կանգ առավ նրա հոգնած սիրտը՝ մեծ վիշտ պատճառելով բոլորիս:

«Վրաստան» թերթի խմբագրակազմ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միություն

ԽԱՉԲԱՌ

■	1	■	2	■	3	■	■	4	■	5	■	6
7						8	■	9				
■		■		■	10				■		■	
11		12					■	13	14		15	
■	16			■	17			■		■		■
■	■		■	18	■		■	19		20		21
22			23		■	■	24					
■	■	■	25		26		■		■		■	
27	28					■	29		30		31	
■		■		■	32					■		■
33		34				■		■	35	36		37
■	38			■	■	39	■	40				
■	■		■	41	42		43	■	■		■	
44	45		46	■	47			■	48		49	
■	50					■	51			■	52	
■	53			■	54			■	55			

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Թուրքական կոր, կարճ թուր: 9.Գարնան ամիս: 10.Արտաքին կերպարանք, ձեւ: 11.Կաթ ուտող, ծծկեր: 13.Խաղաթուղթ: 16.Աղոթք «... Մարիա»: 17.Գետ Գերմանիայում: 19.Եկամուտների եւ ծախսերի սխեմա, որը սահմանվում է որոշակի ժամանակահատվածի համար: 22.Սապատավոր, կորամեջք: 24.Պլան, նախագիծ: 25.Ինքնավար հանրապետություն Ռուսաստանի Դաշնությունում: 27.Ռուսական էստրադայի երգչուհի: 29.Ամերիկացի պրոֆեսիոնալ բասկետբոլիստ ... Դեյվիս: 32.Ամերիկացի դերասանուհի եւ երգչուհի ... Մինելի: 33.Քաղաք Բոլիվիայում: 35.Փշերով պատված, տատասկոտ: 38.Սլավոնական ազգ: 40.Ոտքի հարված: 41.Ինքնատիպ արտաքին: 44.Նրանք-ը՝ արեւմտահայերեն: 47.Ճապոնացի նշանավոր արձակագիր եւ դրամատուրգ ... Կոբո: 48.Երկար, բարակ, սուր գործիք կարելու համար: 50.Ամերիկյան դերասանուհի, երգչուհի, երգահան եւ մոդել Լեյտոն ...: 51.Ընտանի, խոշոր եղջերավոր անասուն: 52.Մեսրոպյան այբուբենի տառ: 53.Թիֆլիսում ծնված հայ օպերային երգիչ, բաս ... Հովհաննիսյան: 54.Փոքրիկ եղեգնյա սրինգ: 55.Կարծես:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Զբոսանավ: 2.Շախմատում գրոհ թագուհու վրա: 3.Կտոր, մաս, թիքա: 4.Գյուղ եւ համանուն գետ Հայաստանի Սյունիքի մարզում: 5.Աշխարհի ճանաչողության հատուկ ձեւ, դավանանք: 6.Քաղաք Լիպեցկի մարզում: 8.Սատար, զորավիգ: 12.Քիչ, սակավ, պակաս: 14.Հնդկական կոբրա: 15.Գետ Հայաստանում: 18.Անգլիացի գրող Վալտեր ...: 19.Անագապղինձ, մղտապղինձ: 20.... - ֆիննական լեզվաընտանիք: 21.Գուցե: 23.Քաղաք Պերուում, Ամազոնի ափին: 26.Պետություն Աֆրիկայում: 28.Ընդավորների ընտանիքին պատկանող խոտանման բույս: 29.Շառլոթ Բրոնտեի դասական վեպ «Ջեյն ...»: 30.Ավտոմեքենայի իրանն առանց շարժական մասերի: 31.Դժգոհության արտահայտում, տրտունջ: 34.Պետություն Եվրասիայում: 36.Հաջողության հավանականություն, հույս: 37.Իշխանական կամ տոհմական պաշտոնական պատվավոր կոչում: 39.Պաղլեղ: 42.Քայլերգ: 43.Հոնկոնգյան եւ ամերիկյան դերասան ... Չան: 45.Ինչ-որ մեկը: 46.Ոչխարի բուրդ: 48.Ամերիկյան դերասանուհի Գարդների անունը: 49.Թե:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Պատրվակ: 9.Խնամք: 10.Կարեն: 11.Ազգական: 12.Հակոբ: 14.Չոբան: 16.Փրկարարական: 18.Ծպտուն: 20.Կապան: 21.Պեղում: 25.Միսաք: 26.Սրտակեղեք: 27.Բատրակ: 28.Հարյուր: 29.Ֆիզիկական: 31.Մինակ: 32.Կանեփ: 34.Կարագ: 38.Լեցուն: 39.Դատապաշտպան: 41.Գարուն: 42.Կիսել: 43.Տիրակալ: 44.Ջիվան: 45.Կցված: 46.Տոթակեզ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Թարգյան: 2.Սրտաբան: 3.Վանական: 4.Անթացուպ: 5.Ամփոփ: 7.Քանոն: 8.Լեղաճաք: 13.Բրյուս: 14.Չարիք: 15.Ապահարզան: 17.Պարզություն: 19.Նետածիգ: 20.Կատաղել: 22.Մրրիկ: 23.Գագիկ: 24.Շերամ: 25.Մեխակ: 29.Ֆստան: 30.Նավակ: 31.Մարալիկ: 33.Փերեզակ: 35.Բարիտոն: 36.Կաչաղակ: 37.Ոտնատեղ: 39.Դուման: 40.Նիցցա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445